ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 4 դեկտեմբերի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Պողոսյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Գոռ Մարգարյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Գոռ Մարգարյանը 12.11.2012թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 129.1-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 1, 3, 42 եւ 83.5-րդ հոդվածների պահանջներին:

Անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներից պարզվեց, որ դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետեւյալ պատճառաբանությամբ.

1. Դատական կազմը գտնում է, որ դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմողն ըստ էության որեւէ անհրաժեշտ եւ իրավական փաստարկ չի ներկայացրել վիճարկող իրավա-

դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը հիմնավորելու համար, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է, որ անհատական դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴՈ-839 որոշմամբ իրավական դիրքորոշում է արտահայտել «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի վերաբերյալ՝ ամրագրելով, որ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որեւէ հատկանիշով: Մինչդեռ դիմողի ներկայացրած ընդհանուր վերացական դատողությունները վիճարկվող դրույթի իրավակարգավորման էության վերաբերյալ՝ վկայում են, որ դիմողն ընդամենը բարձրացնում է խնդրահարույց իրավահարաբերությունների կանոնակարգվածության հարցը՝ դրա ձեւի եւ բովանդակության առումով:

Դատական կազմն արձանագրում է, որ դիմողը պատշաճ չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ սահմանադրահիրավական վեճի առարկա հանդիսացող դրույթի միջեւ պատճառահետեւանքային կապի անմիջական առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

2. Միաժամանակ, դատական կազմը գտնում է, որ դիմողի առաջադրած հիմնական թեզերը ոչ թե վերաբերում են վիճարկվող դրույթին, այլ միանգամայն այլ իրավական փաստաթղթում՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված դրույթին, ըստ որի՝ ԱՊՊԱ պայմանագրի գործողության ողջ ընթացքում կտրոնը պետք է փակցված լինի ավտոտրանսպորտային միջոցի վրա՝ սահմանված տեղում, իսկ վիճարկվող իրավադրույթն ընդամենն այդ պարտականությունը չկատարելու համար վարչական պատասխանատվություն է սահմանում:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Գոռ Մարգարյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

4 դեկտեմբերի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-23